ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱՎԺԱՐՄՈՒՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 5 - 6 (16808) ՇԱԲԱԹ 18 ՀՈՒՆՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԷՆԵՐԳԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԳԱՐԴԱԲԱՆԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՋԷԿ-2-Ը

ՎՐԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԱՑԱՎ ԳՐԵԹԵ 10 ՏՈԿՈՍՈՎ

Հունվարի 17-ին Գարդաբանիի ջերմաէլեկտրակայանի (ՋԷԿ) տարածքում բացվեց նորագույն տեխնոլոգիաներով հագեցված 230 մեգավատտ սահմանված հզորությամբ «Գարդաբանի ՋԷԿ-2» կայանը:

Նոր ջերմակայանի բացմանը մասնակցեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, երկրի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, «Վրաստանի նավթի եւ գազի կորպորացիայի» ներկայացուցիչները:

Ջերմակայանի բացման արարողությանը Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան իր խոսքում բարձր գնահատական տվեց Վրաստանի էներգահամակարգի այդ նշանակալի օբյեկտի շահագործման փաստին:

- Բոլորս քաջատեղյակ ենք, որ մեր գլխավոր խնդիրն է նոր աշխատատեղերի բացումը, տնտեսական աճի ապահովումը, ինչի համար, բնականաբար, էներգաարդյունավետությունը եւ գլխավորապես էներգիայի աղբյուրը կտրական նշանակություն ունեն: Գարդաբանիի նոր ջերմակայանը, առաջին հերթին, կապահովի Վրաստանի էներգահամակարգի կայունությունը եւ, ամենակարեւորը, երկրի էներգաանվտանգությունը: Փաստ է, որ վերջին տարիների ընթացքում բավականին պատկառելի գումարներ ներդրվեցին գեներացիայի ոլորտում: 2012-2019 թթ. մեր էներգահամակարգը համալրվեց 1 միլիարդ 200 հազար մեգավատտ հզորությամբ, ինչը էական նշանակություն ունի: Այդ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՋԵ. «ՀՈՒՍՈՎ ԵՄ, ՈՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ՓՈՒԼԸ ԿԼԻՆԻ ԱՎԵԼԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, նոյեմբերի 14-ին երկրի խորհրդարանի կողմից միայն համամասնական ընտրակարգով եւ զրոյական ընտրաշեմով 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների անցկացման օրինանախագծի մերժումից հետո, միացյալ ընդդիմությունը սկսեց բողոքի ցույցեր:

Հարցի կարգավորման նպատակով, Եվրամիության երկրների դեսպանների միջնորդությամբ, իշխանության եւ միացյալ ընդդիմության ներկայացուցիչների միջեւ սկսեց երկխոսություն՝ ընտրական նոր կարգի փոխընդունելի տարբերակի մշակման նպատակով:

Անցյալ տարվա եզրագծին կայացած հանդիպմանը, «Վրացական երազանքը» ընդդիմա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ԱՐՏԱՇԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑՆ ԷՐ

Հունվարի 17-ին, Վրաստանի նախագահի կարգադրության համաձայն, սահմանադրությամբ սահմանված կարգով, կայացավ Վրաստանի խորհրդարանի արտահերթ նիստը:

Պատգամավորները քննարկեցին ընթացակարգային հարց, ըստ որի, պատգամավորի լիազորություններից ազատված «Ազգային շարժում» խմբակցության անդամ Նիկա Մելիայի փոխարեն, մանդատը հանձնվեց նրա համակուսակից Բադրի Բասիաշվիլուն: Օրակարգի այդ հարցով ելույթ ունեցավ ընթացակարգային հարցերի կոմիտեի նախագահ Գուրամ Մաճարաշվիլին:

Նշենք, որ հարցի քննարկմանը խորհրդարանական ընդդիմությունը չի մասնակցել, քանի որ այն խորհրդարանի նիստերին բոյկոտ էր հայտարարել:

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Հարգելի՛ Վան Բայբուրթյան.

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր գլխավորած 99-ամյա, Սփյուռքի հինավուրց հայկական թերթերից մեկի՝ «Վրաստանի» խմբագրության աշխատակիցներին ու ընթերցողներին Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Սփյուռքում հայկական լրատվամիջոցներն իրենց դերով եւ կատարած աշխատանքով մեծապես նպաստում են հայապահպանությանը, Հայաստանի մասին տեղեկացվածության բարձրացմանը, դառնում են յուրօրինակ կամուրջ համայնքների եւ Մայր հայրենիքի միջեւ: Դրա հիանալի օրինակն է «Վրաստան» թերթը, որը, թեւակոխելով առաջին համարի լույսընծայման մեկդարյա հոբելյանական տարին, չնայած բազմաթիվ դժվարությունների, շարունակում է աշխատանքը, ինչը պահանջում է մեծ ջանքեր եւ միջոցներ:

Այս առաքելության մեջ մաղթում եմ տոկունություն, առողջություն եւ հաջողություն՝ հանուն Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի:

ՋԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ

Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը 2020թ. իրականացնելու է պիլոտային ծրագիր, որը նախատեսում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարբեր ոլորտների բարելավման նպատակով ներգրավել սփյուռքահայ արհեստավարժ մասնագետների:

Ծրագրի նպատակն է սփյուռքի մրցունակ մասնագետների փորձն ու գիտելիքները ներդնել Հայաստանի զարգացման գործում, խթանել Հայաստան-Սփյուռք գործակցությունը, նպաստել «ուղեղների վերադարձին»:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI) հրապարակեց 2019 թվականի նոյեմբերի 19-ից մինչեւ դեկտեմբերի 13-ը ընկած ժամանակահատվածում Վրաստանի ողջ տարածքում (բացառությամբ՝ բռնազավթված տարածաշրջանների) անցկացված հասարակական հարցման արդյունքները: «NDI»-ի հետազոտություններն իրականացվում են Մեծ Բրիտանիայի «UK aid»-ի ֆինանսական աջակցությամբ: Հարցումն անցկացնում է «CRRC-Վրաստանը»: Հարցմանը մասնակցել է 2180 մարդ:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ

«NDI»-ի կողմից անցկացված հարցման արդյունքներով, երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը (82 տոկոս), պաշտպանում է Եվրամիությանն անդամակցությանն ուղղված կառավարության կուրսը: Նշենք, որ նախորդ հարցման համեմատությամբ, անդամակցության կողմնակիցների թիվը ավելացել է 4 տոկոսով, այդքանով էլ նվազել է անդամակցության հակառակորդների քանակը:

Հատկանշական է, որ ավելացել է

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ»

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, անդրադառնալով վերջին ժամանակներում Աբխազիայի այսպես կոչված հանրապետության նախագահական ընտրությունների հետ կապված իրադարձություններին, հայտարարեց, որ հակամարտության կարգավորման խաղաղարար գործընթացում երկխոսությունը, բանակցությունները այլընտրանք չունեն:

Նրա խոսքով, Վրաստանի իշխանությունը վերջին ժամանակներում մի շարք քայլեր է կատարել երկխոսության եւ կապերի ընդլայնման ուղղությամբ:

- Կրկին ցանկանում եմ հայտարարել Աբխազիայի հասարակության ներկայացուցիչների հետ երկխոսության հարցում վրացական կողմի, պետության պատրաստակամության վերաբերյալ: Դա մեր քաղաքականության համար նորույթ չէ, այդ մասին բազմիցս հայտարարվել է: Ավելին, տարիներ շարունակ, առանձնապես վերջին ժամանակներում մի շարք քայլեր են արվել մյուս կողմի ցանկության առկայության դեպքում երկխոսության հաստատման ուղղությամբ: Ինչ վերաբերում է երկխոսության ձեւաչափերին, ապա տվյալ պարագայում գոյություն ունի մեծ հարթակ, եւ այդ հարցերը դյուրությամբ հնարավոր է լուծել: Ինչ վերաբերում է քննարկվելիք թեմաներին, ապա դրանց համար առանցք կարող են ծառայել հաշտեցման մեր քաղաքականությունը, «Քայլ՝ դեպի լավագույն ապագա» խաղաղասիրական նախաձեռնությունը, տնտեսական եւ առեւտրական հարաբերությունների հաստատումը բաժանման գծի երկայնքով, նաեւ կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, բնապաշտպանության թեմաները, որոնք անմիջականորեն առնչվում են բնակչության կենսամակարդակին,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

ԷՆԵՐԳԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԳԱՐԴԱԲԱՆԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՋԷԿ-2-Ը

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ուղղությամբ մենք կշարունակենք աշխատանքը,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանը պետք է հաստատի իր վարկանիշը, որպես էլեկտրաէներգիայի տարանցման եւ կայուն գործակցի տեսանկյունից:

- Բոլորս պետք է ընկալենք, որ այս բարեփոխումները, որոնք էկոնոմիկայի նախարարությունը իրականացնում է էներգետիկայի ոլորտում, նշանակալից է, եւ դա է պատճառը, որ այսօր Վրաստանը՝ որպես տարանցիկ երկիր, կայուն է, հուսալի գործընկեր: Այսպիսին ենք լինելու նաեւ էլեկտրաէներգիայի տարանցման տեսանկյունից, դա այն նշանակալից խնդիրն է, որը ծառացած է երկրի էներգահամակարգի, էկոնոմիկայի նախարարության եւ կառավարության առջեւ,- հայտարարեց Գիորգի Գախարիան: Նա շնորհակալություն հայտնեց Վրաստանի նավթի եւ գազի կորպորացիային, էկոնոմիկայի նախարարությանը, Չինաստանից ժամանած գործընկերներին, ովքեր ռեկորդային ժամկետում երկու տարվա ընթացքում ավարտեցին այդ նշանակալի օբյեկտի շինարարությունը:

Ինչպես բացմանը հայտարարեց էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարը, նոր ջերմակայանը նշանակալից օբյեկտ է, որը կապահովի Վրաստանի էներգաանվտանգությունը՝ անխափան էլեկտրաէներգիա մատակարարելով բնակչությանն ու բիզնես-օբյեկտներին: Այս ջերմակայանը հագեցված նորագույն տեխնոլոգիաներով, կրկնակի արդյունավետ է նախորդ ՋԷԿ-ի համեմատ: Ինչպես գիտեք, էներգետիկան մեր տնտեսական քաղաքականության առաջնահերթությունն է: Մեզանում վավերացվել է տնտեսական բարձր աճ, ինչը օրակարգի հարց է դարձնում էներգետիկական բարեփոխման եւ ոլորտի արմատական վերափոխման անհրաժեշտությունը,- հայտարարեց Նաթիա Թուրնավան եւ հավելեց, որ երկրի համար առաջնահերթային է մնում վերականգնվող էներգիայի յուրացումը: Նախարարը կարեւորեց նաեւ նոր ջերմակայանների շինարարությունը, ինչը նրա հավաստմամբ, համակարգի կայունության երաշխիքն է:

- Դա մեր ռեսուրսն է, որը ապահովում է համակարգի կայունությունը: Օրինակ, միայն այս ՋԷԿ-ը ի վիճակի է ապահովել

Թբիլիսիի էլեկտրաէներգիայի պահանջարկի ամսական 70 տոկոսը,- հայտարարեց Թուրնավան:

Նշենք, որ «Գարդաբանիի ՋԷԿ-2» կայանը կառուցվել է բարձր արդյունավետ եւ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, «Վրաստանի նավթի եւ գազի կորպորացիայի» կողմից ներդրված 180 միլիոն դոլարով: Ջերմակայանի շինարարությունը սկսվեց 2018 թվականի փետրվարին եւ ավարտվեց 2019 թվականի դեկտեմբերին: Այն ներկայումս ընթացիկ ձմեռային սեզոնի համար կգործի ողջ ծանրաբեռնվածությամբ, այսինքն՝ տարեկան սպառողներին կմատուցի 1,3 կվտ/ժ էլեկտրաէներգիա:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ՀՈՒՍՈՎ ԵՄ, ՈՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ՓՈՒԼԸ ԿԼԻՆԻ ԱՎԵԼԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խոսներին ներկայացրեց 50 մեծամասնական եւ 100 համամասնական ընտրակարգով խորհրդարանի ձեւավորման նախագիծ, որը սակայն ընդդիմության կողմից չընդունվեց: Վերջինս շարունակում է պնդել միայն համամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման տարբերակը:

Հունվար 17-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն հայտարարեց, որ ամսվա վերջին ծրագրված է ընդդիմության ներկայացուցիչների հետ նոր հանդիպում, որի ընթացքում Եվրոպական դիվանագետների ներկայությամբ կշարունակվի ընտրահամակարգի հարցի քննարկումը: Խորհրդարանի խոսնակը հույս հայտնեց, որ երկխոսության այս փուլում կողմերին կհաջողվի մշակել փոխընդունելի տարբերակ:

- Հույս ունեմ, որ քաղաքական երկխոսության հաջորդ փուլը ավելի կառուցողական կլինի: Մենք կկարողանանք ընդհանուր համաձայնության գալ, ու երկիրն արդեն նորմալ ռեժիմով կսկսի պատրաստվել 2020-ի խորհրդարանական ընտրություններին,- ասաց խորհրդարանի խոսնակը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է ԻՆԸ ԹԵԿՆԱԾՈՒ

ՆՐԱՆՑ ԹՎՈՒՄ Է ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ

Հունվարի 17-ին սպառվեց գլխավոր դատախազի թեկնածուների առաջադրման ժամկետը: Դատախազության խորհուրդը Վրաստանի գլխավոր դատախազի թափուր պաշտոնի համար առաջադրել է հինգ թեկնածու:

Առաջադրված թեկնածուների թվում են Գրիգոլ Գագնիձեն (ներկայացվել է չորս կազմակերպությունների կողմից, «Փաստաբանների ու իրավաբանների միջազգային օբսերվատորիա ոչ կոմերցիոն հանրային իրավունքի կազմակերպության նախագահն է), Ռաուլ Գամիսոնիան (ներկայացվել է «Եվրոպայի համալսարան» ՍՊԸ-ի ակադեմիական եւ գիտական անձնակազմի կողմից, անդամ է Վրաստանի փաստաբանների ասոցիացիայի), Սոփիո Շենգելիան (ներկայացվել է «Կովկասի համալսարան ՍՊԸ-ի կողմից, համալսարանի Կովկասի իրավական դպրոցի դեկանն է), Պաատա Գաբելիան (առաջադրվել է Իրավական համակարգի զարգացման հետազոտական կենտրոնի կողմից, Վրաստանի փաստաբանների ասոցիացիայի անդամ է), Փիքրիա Ջիրաքաշվիլին (առաջադրվել է Իրավական համակարգի զարգացման հետազոտական կենտրոնի կողմից), Իրակլի Շոթաձեն (առաջադրվել է Վրաստանի տեխնիկական համալսարանի կողմից, Վրաստանի նախկին գլխավոր դատախազն էր), Վալերիան Վաճառաձե (առաջադրվել է «Ջեյ-էմ-Ջի եւ գործընկերներ» ընկերության կողմից, իրավաբան), Մերաբ Գամղրելիձեն (ինքնառաջադրված, իրավաբան), Դավիթ Կոդոնաշվիլի (ինքնառաջադրված, իրավաբան):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու իրավունքների խորհրդի միջգերատեսչական աշխատանքային խումբը շարունակում է աշխատանքը երեխաների իրավունքների հետ կապված առաջնահերթությունների մշակման ուղղությամբ:

Աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը, որն անցկացվեց հունվարի 17-ին, ներկայացվեց այդ հարցով կոնկրետ ծրագիր: Առաջնահերթությունների թվում նշված են խնամառուական համակարգում գործող սոցիալական աշխատողների եւ հոգեբանների աջակցության ուժեղացումը, հանրակրթական հաստատություններում ճգնաժամային իրավիճակների կառավարման կարգի եւ համապատասխան արձանագրությունների մշակումը, հետաքննչական գործունեությունում ներառված անչափահասների պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների կատարելագործումն ու քննիչների վարքի ձեռնարկի հիմնումը:

Վերոնշյալ հարցերն աշխատանքային խմբի հանդիպմանը պետական գերատեսչությունների ներկայացուցիչները քննարկեցին ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում, Վրաստանի ներքին գործերի, արդարադատության, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի, բռնազավթված տարածքների բռնագաղթվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունները շարունակում են ինտենսիվ աշխատանքները:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՄԻԽԵԻԼ ՄԻՇՈՒՍՏԻՆԸ՝ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ռուսաստանի Դաշնության կառավարությունը հրաժարական է տվել: Երկրի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը կառավարության հրաժարականի մասին հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից դաշնային ժողովին դիմելուց հետո:

Ըստ ռուսական լրատվամիջոցների, Վլադիմիր Պուտինի կողմից հայտարարած սահմանադրական փոփոխությունների ֆոնին, Դմիտրի Մեդվեդեւը ճիշտ է համարել գործող կառավարության հրաժարականը:

Վլադիմիր Պուտինը հրամանագիր է ստորագրել Ռուսաստանի Անվտանգության խորհրդի փոխնախագահի պաշտոն ստեղծելու մասին: Դրանում ասված է, որ այդ պաշտոնում նշանակված է Դմիտրի Մեդվեդեւը:

Վլադիմիր Պուտինը վարչապետի պաշտոնում առաջադրեց Միխայիլ Միշուստինի թեկնածությունը, որը 2010 թվականից Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության ղեկավարն էր: Հունվարի 17-ին Ռուսաստանի պետական դուման աջակցեց վարչապետի պաշտոնում Միխայիլ Միշուստինի նշանակմանը: Կողմ է քվեարկել 383 պատգամավոր, ձեռնպահ մնացել՝ 41-ը:

Նշենք, որ ՌԴ հարկային ծառայության ղեկավար նշանակվեց 44-ամյա Վլադիմիր Առաքելովը, ով մինչ այդ ծառայության պետի առաջին տեղակալն էր:

ԱՄՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՄՊԻՉՄԵՆԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում սկսվել է նախագահի իմպիչմենթի գործընթացը: Գերագույն դատարանի նախագահ Ջոն Ռոբերթսը եւ կոնգրեսականներն արդեն երդվել են: Ջոն Ռոբերթսը իմպիչմենթի գլխավոր դատավորն է:

Հիշեցնենք, մեկ ամիս առաջ, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը երկրի նախագահին իմպիչմենթ էր հայտնել: Թրամփի ընդդիմախոսները համարում են, որ ԱՄՆ-ի նախագահը ճնշում է գործադրել Ուկրաինայի նախագահի վրա:

Ինչպես կանխատեսում են, Սենատը, որը վերահսկում են հանրապետականները, արդարացնելու է Թրամփին:

ԻՐԱՆ

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԹԻՌԸ ԽՈՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հունվարի 8-ին, Թեհրանի միջազգային օդանավակայանի մոտակայքում, Իրանի զինուժերի կողմից խոցվեց Ուկրաինական ավիաուղիներ ավիաընկերությանը պատկանող ուղեւորատար ինքնաթիռը, ինչի հետեւանքով զոհվեց 176 մարդ: Իրանցի զինվորականները ուկրաինական ավիաուղիների ինքնաթիռի խոցելու փաստը խոստովանել են հունվարի 11-ին:

Իրանի նախագահ Հասան Ռոուհանին ներողամտություն է հայցել հայտարարությունն ուշացնելու համար եւ հայտարարել, որ Իրանը պատժելու է բոլոր այն անձանց, ովքեր պատասխանատու են Ուկրաինական ավիաուղիների ուղեւորատար ինքնաթիռի կործանման համար: Հասան Ռոուհանիի հայտարարությամբ, նրա կառավարությունը հաշվետու է իրանցիների եւ այլ ազգերի առջեւ, որոնց ներկայացուցիչները զոհվել են ինքնաթիռի վթարի արդյունքում:

Ուկրաինայի նախարարների կաբինետը որոշում է ընդունել Իրանում «Ուկրաինայի միջազգային ավիաուղիների» մարդատար ինքնաթիռի կործանման հետեւանքով զոհվածների ընտանիքներին 200 հազարական գրիվնա (շուրջ 8,3 հազարական դոլար) հատկացնելու մասին:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԿՏՐԱԿԱՆԱՊԵՍ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է»

Հունվարի 15-ին մայրաքաղաքի քաղաքապետարանում կայացավ Թբիլիսիի կառավարության 2020 թվականի անդրանիկ նիստը: Մինչեւ օրակարգով նախատեսված հարցերի քննարկումը, քաղաքապետ Կախա Կալաձեն շնորհակալություն հայտնեց մայրաքաղաքում ամանորյա տոնակատարությունների նախապատրաստման եւ անցկացման գործում ներգրավված կազմակերպություններին եւ գործարար շրջանների ներկայացուցիչներին:

Ապա Կախա Կալաձեն ներկաների ուշադրությունը բեւեռեց մայրաքաղաքի ընթացիկ տարվա բյուջեի վրա: Նա նշեց, որ սահմանված 1 միլիարդ 245 միլիոն լարիի հասնող բյուջեի ծախսերը պետք է լինեն խիստ վերահսկողության ներքո:

- 2017 թվականին Թբիլիսիի բյուջեն կազմում էր 815 միլիոն լարի: Դրա նախորդ տարիներին այդ գումարն ավելի փոքր էր: 2018 թվականին մենք կարողացանք հասնել նրան, որ Թբիլիսիի բյուջեն կազմեց 900 միլիոն լարի: Ինչպես գիտեք, մեր նախընտրական ծրագրում նշված էր, որ հնարավորինս կանենք, որպեսզի մայրաքաղաքի բյուջեն գերազանցի 1 միլիարդի նշանագիծը: Եվ ահա, մենք մեր խոստումը կատարեցինք,- նշեց քաղաքապետը:

Նիստին Կախա Կալաձեն իր տեղակալներին, քաղաքային ծառայության ղեկավարներին եւ քաղաքապետերին կոչ արեց առավելագույն ուշադրություն դարձնել կոռուպցիայի կանխարգելման վրա: Նա մայրաքաղաքի շրջանների ղեկավարներին կոչ արեց առավելագույնս ներգրավել հասարակայնությանը շրջանի տարածքում իրականացվելիք նախագծերի մշակման եւ կատարման գործում:

- Շատ ուշադիր եղեք, որ որեւէ բան բաց չթողնեք: Դուք անձամբ գիտեք իմ մոտեցումն ու վերաբերմունքը. ոչ ոքի ոչինչ չի ներվելու: Ես ամեն բան հասկանում եմ, բայց կոռուպցիան կտրականապես անընդունելի է: Եթե որեւէ մեկն օգնության կարիք ունի, մենք ամեն բան կանենք նրան օգնելու եւ աջակցելու համար,- հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Առողջապահության հարցերով Վրաստանի վարչապետի խորհրդական, երկրի առողջապահության նախկին նախարար Դավիթ Սերգեենկոն մեկնաբանեց պետական աուդիտի ծառայության C հեպատիտի ժամկետանց դեղորայքի մասին հրապարակած եզրակացությունը: Դավիթ Սերգեենկոյի խոսքով, այդ դեղորայքի օգտագործման արդյունքում տուժածներ, ինչպես նաեւ ֆինանսական խախտումներ չեն եղել:

Նշենք, որ ավելի վաղ պետաուդիտի ծառայությունը տեղեկացրել էր, որ ավելի քան 560,6 միլիոն լարի արժողության C հեպատիտի բուժման համար նախատեսված դեղորայքի ժամկետը սպառվել է, եւ այն հարկ էր դուրս գրել: Թանկարժեք դեղորայքի ժամկետի սպառման համար պատասխանատվությունն ընդդիմությունը բարդել էր առողջապահության նախկին եւ ներկայիս նախարարներ Դավիթ Սերգեենկոյի ու էկատերինե Տիկարաձեի վրա եւ իշխանություններին կոչ էր անում վերոնշյալ փաստով սկսել հետաքննություն:

Ինչպես նշեց Դավիթ Սերգեենկոն, աուդիտի վերոնշյալ եզրակացությունն առնչվում է այն ժամանակահատվածին, երբ ինքն էր գերատեսչության ղեկավարը եւ ողջ պատասխանատվությամբ հայտարարեց, որ ժամկետանց դեղորայքով բուժում չի անցկացվել: Անդրադառնալով ծրագրի ֆինանսական բաղադրիչին՝ Սերգեենկոն նշեց, որ Վրաստանը C հեպատիտի դեղորայքը ստանում էր անվճար: Նրա հավաստմամբ, ընդդիմության մեղադրանքը՝ իբր դեղորայքը վաճառվել է սեւ շուկայում, հիմնավորված չէ, քանի որ ստացված եւ ծախսվող դեղորայքի ստույգ, մանրակրկիտ հաշվարկ էր իրականացվում: Ըստ Դավիթ Սերգեենկոյի, C հեպատիտի դեղորայքի վերաբերյալ վերոնշյալ իրարանցումը տվյալ պարագայում քաղաքական շահարկում է:

ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԸ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Թբիլիսիում օրեցօր ավելանում է այն խանութների թիվը, որոնք դադարեցնում են աշխատանքը: Պատճառը ապրանքների թանկացումն է եւ գնորդների նվազումը: Փոքր ձեռներեցները դադարեցրել են նոր ապրանքների ներկրումը եւ, ներկա դրությամբ, հոգում են միայն ունեցած ապրանքի իրացման հարցում:

«Կոմերսանտ» թերթը հետաքրքրվեց Թբիլիսիում առեւտրի ոլորտում գործող փոքր ձեռներեցների գործունեությամբ ու հեռանկարներով: Ինչպես պարզվեց, չնայած նախաամանորյա ժամանակահատվածին, փոքր ձեռներեցները լուրջ դժվարությունների առջեւ հայտնվեցին ապրանքների իրացման գործում: Մասնավորապես, «Պասաժ-2000» առեւտրական կենտրոնում գործող ձեռներեցներն ասացին, որ վերջին տարիներին ապրանքների իրացումը եւ իրացումից ստացվող եկամուտները նշանակալի նվազել են, թեպետ առանձնակի բարդություններ ծագեցին 2019 թվականին, երբ վարձակալները չկարողացան վճարել զբաղեցրած տարածքի համար վարձը, շատերը այդ պատճառով հրաժարվեցին տարածքի վարձակալումից:

Խանութներում ապրանքի գների ավելացումը վաճառողները բացատրում են նրանով, որ ապրանքը գնել են դոլարով եւ վաճառում են լարիով: Ապրանքների գների ավելացումը հարվածում է բնակչության գնողականությանը, նվազում է գնորդների թիվը, ինչը բացասաբար է անդրադառնում առեւտրական շրջանառության համակարգի վրա: Ոլորտի աշխատողների համոզմամբ, ազգային տարադրամի փոխարժեքի անկման պատճառով, իրենք եկամուտ չեն ստանում:

ՆՈՐ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ՝ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

2021 թվականից Վրաստանում ուժի մեջ կմտնի «Խաղալիքների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը, ըստ որի, հսկողության գործակալության ներկայացուցիչներն ստուգելու են ապրանքին կից փաստաթղթերն ու դրա որակը:

Էկոնոմիկայի նախարարության տեղեկությամբ, եթե ապրանքի անվտանգության հետ կապված կծագի կասկած, նմուշը կուղարկվի լաբորատորիա, սակայն մեկ տարվա ընթացքում կգործի արտոնյալ ժամանակաշրջան, եւ պատժամիջոցներ չեն գործի: Ընկերություններին կտրվեն միայն խախտումներն ուղղելու հանձնարարականներ, որոնց իրականացումը կստուգի հսկիչ մարմինը՝ որոշ ժամանակ անց: Նոր կանոնակարգի համաձայն, կվերահսկվի արտադրվող եւ ներմուծվող խաղալիքների որակը: Արդյունքում կշուկայականացվի միայն միջազգային չափորոշիչներին համապատասխանող ապրանքը: Անորակ ապրանքը շուկայից հանելուց եւ ոչնչացնելուց բացի, խախտումների համար կսահմանվեն նաեւ պատժամիջոցներ ու տուգանքներ:

Ապրանքը շուկայից հանելուց եւ ոչնչացնելուց բացի, խախտումների համար կսահմանվեն նաեւ պատժամիջոցներ, սակայն այս միջոցը կսկսի գործել 2021 թվականից:

Իսկ մինչ այդ, ընկերություններին կտրվեն միայն խախտումներն ուղղելու հանձնարարականներ, որոնց իրականացումը կստուգվի հսկիչ մարմնի կողմից: Նոր կանոնակարգը ողջունում են նաեւ բժիշկները: Վերջիններիս ասելով՝ երեխաների օրգանիզմում կապարի հիմնական աղբյուրներից մեկը անորակ խաղալիքներն են:



ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԾԱԽՍՎԻ 42,8 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

2020 թվականի հոկտեմբերին Վրաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների համար պետբյուջեից կհատկացվի 42 760 752 լարի:

Ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ ծախսեր հատկացնելու վերաբերյալ Վրաստանի կառավարությունը հատուկ որոշում է ընդունել:

Հատկացված գումարից աշխատավարձերի համար կտրվի 19 531 295 լարի, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների ֆինանսավորման համար՝ 7 238 050 լարի, իսկ ընտրական սուբյեկտի հեռուստատեսային գովազդի տեղադրման համար կհատկացվի 2 111 674 լարի:

Հիշեցնենք՝ 2016 թվականի խորհրդարանական ընտրություններին բյուջեից հատկացվել էր 38 136 230 լարի, այսինքն՝ ավելի քան 4 մլն լարիով պակաս, քան հատկացվում է 2020 թվականին:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՊԱՐՏՔԵՐԸ ՄԱՐՎԵԼ ԵՆ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորիչ ազգային հանձնաժողովը (ՍԵՄԵԿ) 2020 թվականի հունվարի 16-ի նիստում, քննարկեց էլեկտրաէներգիայի, բնական գազի, խմելու ջրի սպառողների եւ կոմունալ ծառայությունների ընկերությունների միջեւ գոյություն ունեցող վիճելի հարցերը, որոնց մեծ մասը բավարարվել է հօգուտ սպառողների:

Հանձնաժողովի կողմից հանրային նիստում ընդունած որոշումների համաձայն, մարված գումարը կազմել է 186 677 լարի:

Վիճելի հարցերը քննարկման են ներկայացրել ՍԵՄԵԿ-ի սպառողների բողոքների դեպարտամենտի ներկայացուցիչները:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ ԱՃԵԼ Է, ՆԵՐԿՐՈՒՄԸ՝ ՆՎԱՁԵԼ

Վրաստանի ազգային վիճակագրության ծառայությունը հրապարակել է արտաքին առեւտրի տվյալները, որոնց համաձայն, 2019 թվականին արտահանումն ավելացել է 12,4, ներկրումը նվազել՝ 0,8 տոկոսով:

Մասնավորապես, ծառայության տեղեկատվությամբ, 2019 թվականին Վրաստանում ապրանքով արտաքին առեւտրաշրջանառությունը կազմել է 12 834,7 մլն դոլար, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2,7 տոկոսով:

2019 թվականին արտահանումը կազմել է 3 771.5 մլն դոլար, իսկ ներկրումը՝ 9 063,2 մլն:

Առեւտրի բացասական հաշվեկշիռը 2019 թվականին կազմել է 5 291,8 մլն դոլար, այսինքն՝ արտաքին առեւտրային շրջանառության 41,2 տոկոսը:

ՏՈՒԳԱՆՎԵԼ Է 22590 ՀԵՏԻՈՏՆ

Թբիլիսիում երթեւեկության կանոնների խախտման համար, 2019 թվականի հունվարից սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում տուգանվել է 22 590 հետիոտն: Տուգանքների հիմնական մասը ճանապարհը չսահմանված տեղով անցնելու համար է:

Ինչպես հաղորդել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, 2018 թվականին նույն ժամանակահատվածում տուգանվածների թիվը 12 685 է:

Ինչ վերաբերում է մարզերին, ապա 2018-2019 թվականներին հետիոտնների կողմից գրանցվել է երթեւեկության կանոնների խախտման 9 075 դեպք:

ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նաեւ ՆԱՏՕ-ին անդամակցության կողմնակիցների թիվը: Հարցման համաձայն, կողմ է քվեարկել 74 տոկոսը:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՐԿԻՆ ԱՄԵՆԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՆ Է

Ամերիկայի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքներով, կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը մնում է ամենաժողովրդականը. եթե վաղը անցկացվեն խորհրդարանական ընտրություններ, ապա «Վրացական երազանքը» կստանա քվեների 32 տոկոսը: «Ազգային շարժմանը» աջակցություն են հայտնել հարցվածների 14, «Եվրոպական Վրաստան - Ազատ ժողովրդավարներին»՝ 6, «Հայրենասերների ալյանսին»՝ 3, «Լեյբորիստական կուսակցությանը»՝ 2, «Նոր Վրաստան - քաղաքական հարթակին» - 2, «Գիրչիին», «Ժողովրդավարական շարժում - Միացյալ Վրաստանին»՝ մեկական տոկոսը:

Հատկանշական է, որ հարցման արդյունքներով զգալիորեն ավելացել է այն մարդկանց թիվը, որոնք դեռեւս չեն կողմնորոշվել: Այսպես. հարցվածների 14 տոկոսը դեռ չի որոշել, թե ում օգտին է քվեարկելու, 12 տոկոսը ընդհանրապես հրաժարվեց պատասխանել հարցին, իսկ 11 տոկոսը հայտարարեց, որ ոչ մեկի օգտին քվեարկելու մտադրություն չունի:

ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

Ամերիկայի ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI)՝ հունվարի 16-ին հրապարակած հարցման արդյունքները առանձին ոլորտներում եւ հարցերում բացահայտեցի բնակչության շրջանում տեղ գտած կարծրատիպը: Խոսքը վերաբերում է ինչպես երկրում ժողովրդավարության մակարդակին, այնպես էլ՝ Վրաստանի զարգացման ուղղությանը, առանձին հաստատությունների եւ պաշտոնատար անձանց գործունեությանը: Ավելացնենք նաեւ, որ հարցումը բացահայտեց հասարակության շրջանում վախի վերացման եւ հարցերի նկատմամբ առավել խիստ քննադատական մոտեցման ցուցաբերման միտումը: Այսպես, վերջին տասնամյակների ընթացքում առաջին անգամ հարցվածների 53 տոկոսը գտնում է, որ երկիրը սխալ ուղղությամբ է զարգանում, 24 տոկոսի կարծիքով այն ընդհանրապես չի զարգանում, իսկ 19 տոկոսը համոզված է, որ երկիրը ճիշտ ուղղությամբ է զարգանում:

Հարցվածների 59 տոկոսի համոզմամբ, երկրում ժողովրդավարություն չկա:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԼՈՒՐՋ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ

Հատկանշական է, որ վերջին տասնամյակում առաջին անգամ երկրում գործող ինստիտուտների գործունեության գնահատման տեսանկյունից, Վրաց Ուղղափառ եկեղեցին հարցման արդյունքներով կորցրեց առաջատարի դերը: Նախորդ հարցումների 60-70 տոկոսանոց աջակցության համեմատ, այս անգամ Եկեղեցու գործունեությանը հավանություն է տվել հարցվածների կեսը:

Քննադատական վերաբերմունք է վավերացվել նաեւ խորհրդարանի գործունեության նկատմամբ: Հարցվածների 57 տոկոսը վատ գնահատական է տվել երկրի օրենսդիր մարմնի աշխատանքին: Խորհրդարանի աշխատանքը լավ է գնահատում հարցվածների ընդամենը 9 տոկոսը:

Հարցումը բացահայտեց նաեւ բնակչության բացասական վերաբերմունքը դատական իշխանության նկատմամբ: Հարցվածների 45 տոկոսի կարծիքով, դատարանները վատ են աշխատում, 10 տոկոսը՝ լավ, 29 տոկոսը՝ բավարար:

Ընդհանուր ցուցակում որոշ բացառություն են կազմում բանակն ու ոստիկանությունը, որոնց նկատմամբ բնակչության վերաբերմունքը դրական է, եւ նախորդ հարցումների համեմատ, փոփոխության չի ենթարկվել:

ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ

Ամերիկայի ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցումը ցույց տվեց բնակչության խիստ քննադատական մոտեցումը պաշտոնատար առանձին անձանց գործունեության նկատմամբ: Ըստ հարցման արդյունքների, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի գործունեությունը դրական է գնահատել հարցվածների 21, բավարար՝ 34 տոկոսը, իսկ 35 տոկոսի համոզմամբ, նա չի արդարացրել իր հետ կապված հույսերը: Առավել բացասական գնահատական է տրվել Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու գործունեությանը: Նրա աշխատանքը 54 տոկոսի կարծիքով, հեռու է բավարար լինելուց:

Հանրության կողմից բարձր գնահատական է տրվել Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի, ինչպես նաեւ ընդդիմության ներկայացուցիչ Դավիթ Բաքրաձեի գործունեությանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԸ՝ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ

ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի՝ NDI-ի կողմից անցկացված հարցման արդյունքներով, Հանրային հեռարձակողի Առաջին ալիքը 11 վրացական ալիքների շարքում միակն է, որի մասին հարցվածների մեծ մասը՝ 28 տոկոսը հայտարարել է՝ ոչ մի քաղաքական կուսակցության հանդեպ կողմնակալություն չեն ցուցաբերում:

Հարցումը ցույց է տվել, որ բնակչության երեք տոկոսը հավանություն է տալիս Առաջին ալիքի գործունեությանը: Վստահությամբ են վերաբերում նաեւ «Իմեդի», ապա՝ «Մթավարի արխի» եւ «Ռուսթավի 2» հեռուստաընկերությունը:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

Նշենք, որ Վրաստանի մի շարք հասարակական կազմակերպություններ, իրենց անհամաձայնությունն են հայտնել NDI-ի հրապարակած արդյունքներին՝ հայտարարելով, որ 3500-ամյա հինավուրց ազգի արժանապատվությունը ոտնահարող, հակավրացական կողմնորոշման այդ կազմակերպությունը, ընդհանրապես պետք է հեռացվի Վրաստանից: Հարցման արդյունքներին իրենց անհամաձայնությունն են հայտնել նաեւ Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչները:

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԵՎ ՄԵՆՔ

ԵՐԿՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԵՍԸ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ ՉԻ ԱՆՑԵԼ

Վրաստանում գրանցված ավտոմեքենաների կեսից մի փոքր ավելին է անցել պարտադիր տեխնիկական ստուգում: Վերոնշյալ գործընթացի մեկնարկից մեկ տարի անց, պարզվեց, որ տեխստուգման կենտրոնների նախնական ստուգման համար դիմել է ընդամենը 788 հազար ավտոտրանսպորտային միջոց, իսկ պաշտոնական տվյալներով, երկրում երթեւեկում է գրեթե երկու անգամ ավելի ավտոմեքենա, շատերը խուսափում են անցնել տեխստուգում, հետեւաբար գրանցված մեքենաներից կեսից ավելին վթարային են:

Ինչպես տեղեկացրեց ավտոմեքենաների տեսչության մարմինների ասոցիացիայի ղեկավար Վաժա Իորդանիշվիլին, Վրաստանում գրանցված 1,3 միլիոն ավտոմեքենայից տեխստուգում է անցել 788 հազարը: Պատճառներից մեկը, գոյություն չունեցող մեքենաներն են, որոնք գրանցումից չեն հանվել: Պատճառների թվում է նաեւ ճանապարհների վարչական վերահսկողության բացակայությունը, որի արդյունքում, տարածաշրջաններում երթեւեկում են տեխստուգում չանցած ավտոմեքենաներ:

Ավելացնենք, որ Վրաստանում, բոլոր ավտոտրանսպորտային միջոցները, որոնք կունենան ավելի քան 10 տարվա անվադողեր, տեխզննում չեն կարողանա անցնել: Սահմանափակումը ուժի մեջ է մտնելու 2020 թվականի ամռանը: Այդ մասին հայտնեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության ցամաքային տրանսպորտի ծառայության ղեկավար Շալվա Ուրիադմղոփելին:

- Ապրիլի 1-ից սահմանափակումներ են գործելու՝ կապված անվադողերի հետ: Անվադողերն ունեն ժամկետ, համապատասխանաբար, ավտոտրանսպորտային միջոցների անվադողերը տեխզննման ժամանակ պետք է լինեն առավելագույնը 10 տարվա,- Վրաստանի Առաջին ալիքի հետ զրույցի ընթացքում նշել է Շալվա Ուրիադմղոփելին:

ԿԱՐԳԵԼՎԻ ԱՋ ՂԵԿԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Աջաղեկ եւ ղեկը փոխած ավտոմեքենաների տեխզննման գործընթացում 2020 թվականի ապրիլի 1-ից սպասվում են փոփոխություններ:

Կոնկրետ, աջ ղեկով ներկրված մեքենաների վարորդները պետք է պահպանեն ղեկի դիրքը, հակառակ դեպքում, ապրիլի 1-ից ղեկը փոխված մեքենաները պարբերական տեխզննում չեն անցնի:

Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության, ցամաքային տրանսպորտի գործակալության լրատվությամբ, արգելքը տարածվելու է այն աջաղեկ ավտոմեքենաների վրա, որոնք առաջին գրանցումը կանցնեն 2020 թվականի ապրիլի 1-ից հետո:

ԻՆՉՊԵՍ ՓՈԽԵԼ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՎՐԱՅԱԿԱՆՈՎ

Այն անձիք, ովքեր Վրաստանի քաղաքացիներ են եւ ունեն այլ երկրի վարորդական իրավունքի վկայական, սակայն ցանկանում են այն փոխարինել վրացականով, կարող են դիմել ներքին գործերի նախարարության ծառայության գործակալությանը:

Վրաստանի քաղաքացին վարորդական իրավունքի վկայականը փոխելու համար պետք է ներկայացնի մի քանի փաստաթուղթ.

Դիմում,

Վրաստանի քաղաքացիությունը հաստատող վկայական,

Այլ պետության կողմից տրված վարորդական վկայական,

Օրենքով սահմանված կարգով, օրինականացված կամ վավերացված վարորդական իրավունքի վկայականի հաստատում (իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի գրավոր դիմում, կամ օտար պետության կողմից տրված վարորդական վկայականի ընդհատման կամ դադարեցման մասին փաստը հաստատող տեղեկանք),

Տեղեկանք առողջական վիճակի մասին,

Վարորդի վկայականն ընձեռող երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված սահմանի հատման մասին տեղեկանք,

Վճարումը հաստատող փաստաթուղթ (վճարը՝ 15 լարի):

Վարորդական իրավունքի վկայականը փոխելու համար, անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ, անձը պետք է հաստատի, որ մինչեւ վարորդական վկայական ստանալը (առնվազն՝ 185 օր) 1 տարի ապրել է այն երկրում, որտեղից եւ ստացել է վկայականը: Ինչպես նաեւ օտար լեզվով ստացած բոլոր փաստաթղթերը պետք է թարգմանվեն վրացերեն եւ համապատասխանաբար վավերացվեն նոտարի կողմից:

Իսկ օտար երկրի քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձիք օտարերկրյա պետության կողմից տրված վարորդական վկայականը փոխելու համար պետք է ներկայացնեն ներքոնշյալ փաստաթղթերը.

Դիմում (լրացվում է տեղում),

Անձնագիր կամ բնակության վայրի մասին վկայական,

Այլ պետության կողմից տրված վարորդական վկայական,

Վարորդական իրավունքի վկայականի հաստատում (վարորդի վարորդական իրավունքի մասին հաստատող փաստաթուղթը պետք է օրինականացված կամ վավերացված լինի օրենքի կողմից: Ինչպես նաեւ նպատակահարմար է նշել վարորդական իրավունքի վկայականում նշված կարգը),

Տեղեկանք առողջական վիճակի մասին (Չեւ IV-100/ա),

Վրաստանում գրանցված լինելու կամ ժամանակավոր գրանցումը հավաստող փաստաթուղթ,

Վճարումը հաստատող փաստաթուղթ (վճարը՝ 15 լարի):

Փոխարինված վարորդական իրավունքի վկայականը կտրվի մի քանի րոպեի ընթացքում:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՈՒԿՅԱՆԸ